ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՈՐԸՆԵԼ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(30 օգոստոսի, կիրակի, 1998 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ձերդ Սրբություն Վեհափառ Հայրապետ, Սիրելի բարեպաշտ հավատացյալներ:

Ուրախության, ցնծության և բերկրանքի տոնախմբություն է այս պահին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, այս տաճարի լուսեղեն հարկի ներքո և մեր հոգիներում, քանզի այսօր մեր հարկերից ներս ծնվեցին նոր քահանաներ: Այդ ծնունդը զգացում է ձևավորում իմ հոգու մեջ, զգացում, որը դրսևորվում է որպես աղոթք, որպես գոհաբանություն և օրհներգություն՝ արտահայտված սաղմոսերգուի հետևյալ խոսքերով. «Տէ՛ր, եթէ զշրջունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո» (Սաղմ. Ճ 17): Մենք գոհություն ենք վերառաքում առաջին հերթին նախ Ձերդ Սրբության համար, Վեհափառ Տեր, որ չորս ամիսներից հետո Դուք վերստին վերադարձաք Մայր Աթոռ և բազմեցիք Լուսավորչի գահին՝ Ձեր ձեռքը առնելով հայրապետական առաջնորդության ղեկը, հաղթանակած այն տկարությանը, այն անհանգստությանը, որ ունեիք տարիներ առաջ: Եվ մենք աղոթք և բարեմաղթանք ենք վերառաքում առ Աստված՝ Ձեր կենաց արևշատության, Ձեր քաջառողջ երկար կյանքի համար, որպեսզի Ձեր աջը տակավին երկա՜ր-երկա՜ր օրեր ու տարիներ հովանի լինի մեր հոգևոր կրթական հաստատությունների, Հայաստանյայց Առաքելական Ս Եկեղեցու ու մեր հավատացյալ ժողովրդի վրա:

Գոհություն և փառք ենք մատուցում նաև այն երևույթի համար, որ տարիներ առաջ երազել ենք և այսօր իրականություն է դարձել: Ինը տարիներ առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում հիմնադրվեց Վազգենյան Հոգևոր նոր դպրանոցը Սևանա կղզում, և այսօր առաջին հունձքն է տրվում: Այս երիտասարդները, իրենց կրթությունը ստանալուց հետո, եկան և ուսումն ամբողջացրեցին Գևորգյան Հոգևոր ճեմարանում, և այսօր հունձքը՝ առաջին այս բերքը, որ մենք ունենք, ձեռնադրվեցին քահանաներ, նրանցից իննից ութը, և մեր գոհությունը, փառաբանությունն ենք բարձրացնում առ Աստված նաև այն բանի համար, որ հունձքի այս տոնին, բերքի այս տոնին ներկա են սերմնացաները ու մշակները, բոլորը, ինչպես բարերարները Միացյալ Նահանգներից, այնպես էլ ուսուցիչները և Սևանա դպրեվանքի ողջ անձնակազմը: Առաջիններն իրենց նյութական ներդրումներով, երկրորդներն իրենց հոգևոր գիտելիքներով, իրենց մտքի գիտությամբ կրթեցին և դաստիարակեցին մեր նոր ձեռնադրյալ երիտասարդ քահանաներին: Եվ նրանց այսօր, որպես ընծա, մատուցում ենք Ձերդ Սրբությանը:

Այս առիթով, Վեհափառ Տեր, ես ցանկանում եմ խնկարկել նաև իմ որդիական սերը և հարգանքը երջանկահիշատակ Վազգեն Առաջին

Հայրապետին, նրա լույս հիշատակին, որի օրհնությամբ հիմնադրվեց Սևանա դպրանոցը և կոչվեց իր անունով, կոչվեց Վազգենյան ճեմարան: Ես հիշում եմ, մի առիթով, երբ հանգուցյալ Հայոց Հայրապետի հետ շրջում էինք Վեհարանի առջև, նա դիմեց ինձ՝ ասելով. «Սրբազան, շուտ արա, ուզում եմ տեսնել դպրեվանքի առաջին շրջանավարտներին»: Այսօր ես հավատացած եմ, որ երկնքում հրճվում է նրա հոգին, որովհետև նախախնամության կամքով այս ձեռնադրությունը զուգադիպեց այնպիսի մի պահի, երբ մեր ժողովրդով հանդերձ Չերդ Սրբության ծննդյան տոնակատարությունն ենք նշում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, և այս նորո ձեռնադրյալներին մենք մատուցում ենք Չերդ Սրբության ծննդյան տոնին՝ որպես լավագույն նվեր, որպես լավագույն ընծա մեր և մեր ժողովրդի կողմից:

Երեկ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, երբ մենք ներկայացրեցինք մեր երիտասարդ սարկավագներին Վեհափառ Հայրապետին, հանկարծ ձեռքս անցան նրանց դիմումները՝ ուղղված Վեհափառ Տիրոջը: Ես կարդացի այնտեղ տողեր, որոնցով խնդրում էին Վեհափառ Հայրապետի օրհնությունը և տնօրինությունը՝ արժանանալու քահանայական բարձր պատվի: Անմիջապես այս տողերը իմ մտքում հարց ձևավորեցին՝ քահանայական բարձր պատվի կոչում: Արդյո՞ք երիտասարդ մեր սարկավագները՝ թեկնածուները քահանայության, գիտակցաբար են թղթին հանձնել այս տողերը: Եվ համոզմունքը, պատասխանը միանշանակ էր ինձ համար, այո՛, նրանք գիտակցում են և գիտակցաբար են թղթին հանձնել այս տողերը, նրանք գիտակցում են, որ քահանայությունը բարձր և պատասխանատու մի պաշտոն է, որ Հայր Աստված չվստահեց անգամ հրեշտակներին, այլ վերապահեց իր Միածին Որդուն, որին ուղարկեց աշխարհ՝ մարդու փրկության համար, ինչպես ավետարանիչն է ասում. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Հովհ. Գ 16):

Նրանք այսօր դառնում են Քրիստոսի գործակիցները, դառնում են քահանաներ՝ իրենց քահանայապետ ունենալով մեր Տեր Հիսուս Քրիստոսին, և ես վստահ եմ, որ բարձր այդ պաշտոնը հասու է նաև մեր նորո ձեռնադրյալ երիտասարդ քահանաներին: Պաշտոնն այս փառք չէ՛, պատիվ չէ՛, բարձունք չէ՛, որին նրանք արժանացել են, ինչպես Քրիստոսն է ասում. «Քանզի եւ Որդի Մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց» (Մարկ. Ժ 45), այդպես էլ այս պաշտոնը նրանց համար նշանակում է ծառայություն, նշանակում է աշխատանք, նշանակում է նվիրում, ինքնազոհաբերում ազգին և ժողովրդին: Ես հավատացած եմ, որ երիտասարդ այս քահանաները, Ավետարանի խոսքի համաձայն, ներկա մեր կյանքում, որպես ներկա օրերի քահաններ, լինելու են աղը երկրի և լույսը աշխարհի:

Նրանք իրապես իրենց աշխատանքով, իրենց վարքով, իրենց գործունեությամբ, հավատի գործերով պիտի համ տան հայոց երկրին, մեր ժողովրդին և պիտի լույս լինեն նրանց համար մասնավորապես այսօր, երբ մեր ժողովրդի հոգին և միտքը պիտի լուսավորվի Քրիստոսի Ավետարանի պատգամներով, պիտի պարզաբանվի Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նրա առաքելությունը, քանզի այսօր բազում-բազում օտարամուտ կրոններ թափանցել են

մեր հայրենիքից ներս և իրենց ավերն են գործում եկեղեցական մեր կյանքում, հոգևոր մեր աշխարհում: Ես հավատացած եմ, որ. իբրև քաջ ու բարի հովիվներ, նրանք պատնեշելու են նրանց առաջընթացը, ոչ թե պայքար մղելով, այլ պարզապես իրենց քահանայական առաքելությունը կատարելով. Քրիստոսի Ավետարանը ուսուցանելով, մեր հայրերի սրբազան ուղղափառ վարդապետությունը մատուցելով մեր ժողովրդին:

Այս վստահությամբ, այս հավատքով էր, որ մենք համարձակությունն ունեցանք մոտենալու Հայոց Հայրապետին և խնդրելու իր օրհնությունը և տնօրինությունը ձեռնադրության արտոնություն ստանալու այս երիտասարդ սարկավագների համար: Եվ իմ խնդրանքն է նոր ձեռնադրված քահանաներին, որոնց հոգևոր ծնողն եմ այսօրվանից ևեթ, որպեսզի նրանք ապրեն այնպես և գործեն այնպես, որ զորություն գա իմ աջին, որպեսզի աջս անվերապահորեն միշտ էլ բարձրանա վեր՝ դրվելու նոր ձեռնասունների, նոր սարկավագների գլխին և օծելու նրանց ճակատը, կոչելով նրանց սպասավորության Հայ Առաքելական Եկեղեցու մեջ:

Իմ խնդրանքն ու ցանկությունն, աղաչանքն ու մաղթանքն է, որպեսզի երիտասարդ այս քահանաները գործեն, աշխատեն այնպես տքնաջան ու նվիրումով, սիրով ու հավատքով ծառայեն մեր ժողովրդին, որպեսզի հրճվի Հայոց Հայրապետի հոգին, որպեսզի զորանա ու գոտեպնդվի Հայոց Հայրապետը, որպեսզի տեսնի և համոզվի, որ Եկեղեցու վաղվա օրն ու ապագան պայծառ է, որ Հայ Եկեղեցին չունի որևէ մտահոգություն, որ ո՛չ մի հուր և ո՛չ մի սուր, ո՛չ մի քարոզություն, ո՛չ մի գրիչ, ո՛չ մի շահ, ո՛չ մի կաշառք չեն կարող հայ ժողովրդին իրենց հավատքից սասանել: Հայ ժողովուրդը կմնա հավաքված իր Եկեղեցու կամարների ներքո՝ իր հայրերի հավատքին հավատարիմ, և իր հայրենիքը շենացնող ազնիվ աշխատանքի մեջ:

Վեհափառ Տեր, այս գեղեցիկ, այս ուրախ օրվա առիթով կրկին անգամ մենք բերում ենք Ձերդ Սրբությանը մեր սրտի ամենաջերմ բարեմաղթանքները և հայցում, որ Լուսավորչի գավազանը երկա՜ր տարիներ հաստատուն և ամուր լինի ձեր ձեռքերի մեջ՝ առաջնորդելու մեզ դեպի բարին և դեպի խաղաղությունը, որպեսզի մենք մշտապես մեր շուրթերից դեպի երկինք վերառաքենք օրհնություն և սաղմոսերգություն՝ գովերգելով Տիրոջ փառքը, գովերգելով մեր Եկեղեցու ճանապարհը, որ է՝ բարի, արդար, հավատքի ու աշխատանքի մի ճանապարհ, ճանապարհ դեպի խաղաղության հանգրվանը:

«Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»: